

ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

Երկրագործական հարկեր կամ Աշար: Սրանով օրինական պետական հարկերը, որ համարեա մշտական բնաւորութիւն ունին այս կամ այն չափով՝ վերջանում են: Բայց դա միայն չէ տաճական հարկային սխրեմը Թուրքիայի քրիստոնեաների վերաբերութեամբ. դրանցից չեւոյց գալիս են ուրիշները ևս...

Աշար կուտում է բոլոր հացահատիկներից, խոտից, առուց-տից, բանջարեղէններից, այգիներից, բոստանից (սեխի, ձմերուկի, վարունգի ցանքս) և այլ երկրագործական արդիւնքներից առնւոյ հարկը:

Տաճական օրէնքով, եթէ ամեն բան կախարէր օրէնքի սահմաններում—պէտք է գիւղացու արդիւնքի $\frac{7}{8}$ -ը թողնէր պիրոշը և միայն $\frac{1}{8}$ -ը վերցնէր իբր հարկ: Այդպէս է տրամադրում օրէնքը, այժմ այդպէս էլ ընդունւած է գրեւ պաշտօնական թղթերում և պետական հաղորդագրութիւններում: Ինքն ըստ ինքեան հասկա-նալի է, որ եթէ գիւղացին ստանում է, օրինակ՝ 120 փութ ցորեն, 15-ը կառավարութիւնն առնէ, 105-ը կը ֆնայ իրեն և դրա-նով մի միջին ընտանիք կարող է մի տարի ապրել... Այլ ևս ի՞նչ զգոհութիւն, ի՞նչ վայնասուն, ի՞նչ արիւն...

¹) Տես Մուրճ 1899, № 1.

Բայց իջնենք իրականութեան, կարմիր ու արևնոյ իրակա նութեան զիրկը: Սկսենք հէնց այս հարկը հաւաքելու սխալմից: Այդ սխալմը, մեր կարծիքով, շատ բան կը պարզէ ոչ միայն աշարի ալլ և ամբողջ տաճկական կառավարութեան բնաւորութեան, նրանում թագաւորող անդրձրհեղեղեան ներքին կարգերի վերաբերութեամբ:

Ամեն վիլայէթի աշարը ծախւում է հրապարակական աճուրդով: Միայն աշարը չէ, որ ծախւում է աճուրդով: Վիլայէթի վարչութիւնն անգամ ծախւում է աճուրդով: Սա ծաղրելի է թւում, չափազանցութիւն, սուր է համարւում... Բայց... Փաքո է:

Բացւում է, օրինակ, Երզրումում Վալիի (գուբերնատորի) տեղ: Ելլոգ-Քէօշիի և Սադրազամի (մեծ եպարքոսի կամ վեզիրի) շուրջը Փաւորիսների, ներքինիների կամ կըզ-աղալար-ների ճահիճը թունդ է առնում, ալեկոծւում: Ամեն մէկն ուզում է իւր թեկնածուն առաջ քշել: Իսկ մի Փաւորիսի կամ մի կըզ-աղալարի թեկնածու լինելու համար պէտք է դեղին մեկուսի և ապագայի փայլուն խոստումներ: Առանց բախշիշի, առանց ոսկու անկարելի է Փաւորիսի թեկնածու լինել... Ներողութիւն, մոռացա՛յ. մի միջոց էլ կայ Փաւորիսի թեկնածու դառնալու համար. դա գեղեցիկ աղջիկն է: Այս միջոցով յաճախ անձեռնմխի և ամենակարող են հանդիսանում Ձերքէզները: Ձերքէզ կոչւող չինարի հասակ, բարակ մէջք, սև կրակոյ աչքեր և կամար, խիտ յոնքեր ունի: Բոսփորի մեղկացած զաւակն ամեն ինչ կը տայ նրան տիրանալու համար: Եւ ուղարկւում են Մարմարայի հրաշագեղ ափերի ոչ նւազ հրաշագեղ պալատները ներքին նահանգներից գեղանի, անմեղ կոյսեր, մանաւանդ Ձերքէզուհիներ...

Ով աւելի է տալիս, նա էլ դառնում է ամենագորեղ Փաւորիսի թեկնածուն, նա էլ սպանում է, օրինակ՝ Երզրումի վալիութիւնը: Բայց վալիի ռոճիկը քիչ է. նրանով չի կարող նա ամարդավարի ապրել, իր պաշտպանին միշտ նւէրներ ուղարկել Պոլիս, որ նրա աչքը քաղցր մնայ իր վրայ... եթէ չուղարկի և կամ անկանոն ուղարկի՝ տեղից կը զրկւի... վերջապէս այդ ռոճիկով նա չի կարող նեղ օրւայ համար էլ մի բան տնտեսել: Ձէ՛ որ ամեն մի փաշայի բարձրագոյն իդէալն է ունենալ Մարմարայի, Ոսկեղջիւրի կամ

Բոսֆորի ափերում մի մարտերեայ պալատ, լիքը զեղանի կոշտերով և Ալլահի պարգեւած բոլոր բարիքներով: Մոլց, մեղկ ու ցոփ կեանքը բոլոր թուրք պաշտօնեաների միակ իղէալն է:

Վալին իր այս երեք սրբազան պարսկանութիւնները (լաւ ապրել, նեղ օրւայ համար պնդեալ և իր պաշտպաններին Պոլիս փող ուղարկել) կառարկելու համար պարտասօր է ամեն ինչ անելու, ամեն սրբութիւն պահելու, եթէ ունի մի աշդպիսի բան իր սըր-տում:

Նա իր հերթին Պոստում տեսածն իր վերաբերութեամբ՝ գործ է դնում լոյն չափերով իր իշխանութեան տակ պնդած բոլոր պաշտօնների բաժանման ժամանակ: Եւ այսպէս՝ վարչական սան-դուխտի ամենաբարձր աստիճանից սկսած մինչև յետին զափթիէն շարունակում է ծախելու և ծախելու սխտեմը:

Աշարի ածուրդով ծախելը մի փառաւոր միջոց է վալիի և նրա պաշտօնեաների ձեռքում փող ճանկելու, հարստանալու հա-մար: Նրանք էլ օգտւում են այդ յարմար միջոցից:

Հրապարակալին ածուրդ է նշանակում վալիանիստ քաղա-քում՝ վիլայէթի աշարը ծախելու համար: Ուր իցէ գէշն, անդ և ժողովեցին արծիքն, ասում է գրաբար առածը: Բոլոր մեծ-մեծ զիշակեր վաշխառուները թափւում են քաղաքը, ածուրդին մասնակցելու: Ամբողջ վիլայէթի աշարը մի վաշխառուի ուժից վեր կը լինի, այն էլ Տաճկաստանի ներքին նահանգների պէս երկրում, ուր դեռ խոշոր հարուստներ չկան: Դրա համար գրեթէ միշտ վի-լայէթի աշարը բաժանւում է մի քանի մասերի և ամեն մի մասն առանձին-առանձին ծախւում: Ով աւելի շատ և աւելի ճարպիկ կերպով ուրեցրեց վալիին, մութասերիֆին, գալմազաֆին, բաշքա-թիրին, վալիի մօտաւոր ու ազդեցիկ բարեկամներին, նրա ծառա-ներին, ներքինիներին և ալին, և ալին, և ալին՝ նրան էլ կը յաջող-ւի գնել այս ինչ կամ այն ինչ խոշոր գաւառի աշարը: Հրապա-րակալին ածուրդն իր կարգով, այս կուլիսալին գողտի մասն իր կարգով:

Ում վրայ որ մնայ աշարը, նա այնքան ճարպիկ պէտք է լինի, որ և՛ պետութեան նշանակած հարկի չափը կամ կապալադրամը հանէ, և իր, թերևս նրանից շատ աւելի՝ տւած կաշառքները հա-

նէ, և՛ իր «աշխատանքի վարձը» շահիւ Այստեղից արդէն պարզ երևում է, թէ ինչպէս սահման պղպճակների նման օդն են ցնդւում օրէնք ու իր պահանջած $1/8$ -ը կամ $1/7$ -ը: Բայց այդ դեռ քիչ է:

Ամեն մի խոշոր աշխատող յաճախ մանր չափերով ծախում է իր բաժինն աւելի մանր վաշխառուների, ստանալով իր «առիւծի բաժինը»: Երբեմն սրանք էլ որոշ օգուտ ստանալով՝ իրենց միջակ բաժինները ծախում են աւելի մանր կապալառուների, այնպէս որ՝ վերջապէս մի փոքրիկ շրջան, մէկ կամ մի քանի գիւղ մնում է որ և է գիւղական մանր վաշխառուի ձեռք. իսկ այս ձեռքից-ձեռք անցնելը բարդում ու բարդում է աշարի չափը... Ո՞ւմ հոգն է. թող ժողովրդի հոգին դուրս գայ:

Թէ Եւրոպայում, թէ մեզանում շարերը կարծում են, որ ծածկաւորանի վաշառուները միայն քրիստոնեաներն են, մանաւանդ հայերն ու յոյները: Այդպէս միաձողները կարծում են, որ թուրքն ընդունակ չէ վաշխառութեան, իսկ քուրդը—երբէք, երբէք: Միամիտ մարդիկ, որ կարծում են, թէ կրօնը կամ այս ու այն մեկու-Ֆիզիկական ազգային կամ լասային յարկութիւնները կարող են արգելել մարդկանց դառնալ վաշխառու, եթէ չըջապարս տնտեսական պայմաններն սրիսլում, պահանջում են այդ բանը:

Աշար գնող վաշխառուների մէջ կան հայեր, թուրքեր, հրէաներ, յոյներ և բաւական յաճախ, մանաւանդ վերջին 8—10 տարւայ ընթացքում՝ քրդեր: Վաշխառութիւնը ոչ ազգութիւն է ճանաչում, ոչ կրօն. նա բացարձակ կոսմոպոլիտ է: Բոլոր ազգերի վաշխառուներն իրար նման են: Դա բնական հետեւանք է զբաղմունքի նմանութեան: Մի թուրք և մի հայ վաշխառու իրար աւելի նման են իրենց բնաւորութեամբ, իրենց բարոյականով և աշխարհայեացքով, քան մի թուրք վաշխառու և մի թուրք անմեղ ու խաղաղ երկրագործ: Զբաղմունքների նմանութիւնը ծնեցնում է բնաւորութեան և բարոյականութեան նմանութիւն: (Sén Hamon „Les militaires professionnels“:

Էմլաք-Դայրէսիի (հարկերի սենեակ) նշանակած աճուրդին կարող են մասնակցել գիւղական ամբողջ հասարակութիւններն իբր մի մարմին (in corpore), գնել իրենց գիւղի աշարը, բաժանել ընտանիքների վրայ, հաւաքել և վճարել: Այդպիսի դէպքերում գիւղը

պէտք է ներկայացնէ մի կամ մի բանի երաշխաւոր վստահելի ան-
ձեր։ Ի հարկէ գիւղական ազգաբնակիւթեան համար ամենաձեւնորո-
ւմիջոցն այդ է աշարի ծանր բեռից ազատելու համար։ Բայց չկայ
վարդ առանց փուշի... Այստեղ էլ նոր ու անտանելի այլանդակու-
թիւններ են ծագում։ Զուր հայաբնակ գիւղերը չեն վստահանում
այդ քայլն անել, համոզւած լինելով, որ իրենց վրայ խիստ թանգ
կը նստի մրցութեան մրնել որ և է թուրք կամ քուրդ փողապէր
վաշխառուի հետ։ Զուր հայաբնակ գիւղեր էլ այնքան չկան. մեծ
մասը խառն ազգաբնակիւթիւն ունին։ Իսկ այդ դէպքում թուր-
քերն էլ են սալիս երաշխաւորներ, հայերն էլ Միայն հարկը հա-
ւաքելու ժամանակ թուրքերը մերժում են վճարել, իսկ կառավա-
րութիւնը ծանրանում է հայերի վրայ, նրանցից է առնում և
թուրքերի բաժին աշարը. է՛ք որ ամբողջ գիւղն է վճարող միու-
թիւնը... Ել ձվ է հարցնում արդարութիւն. մի բան որ քրիս-
տոնէի վկայութիւնը չի անցնում դատարանում... Եւ մի՞թէ քրիս-
տոնեայի բողոքը նշանակութիւն ունի... Այդ և ուրիշ շատ պատ-
ճառներ խիստ հազւագիւտ են դարձնում գիւղական հասարակու-
թիւնների մասնակցութիւնը աշարի ածուրդների մէջ և աշարը
մնում է համարեա միշտ կապալառու վաշխառուների ձեռքը։ Իսկ
եթէ գնող չեկաւ, այն ժամանակ մնում է կառավարութեան վրայ,
որ և սկսում է հաւաքել իր սորորին ծառայողների ձեռքով։ Զվճա-
րելու դէպքում լցնում է գիւղը սուարիներով և միս ու ոսկոր
անում՝ հաւաքում։ Բոլոր զօրքն ապրում է գիւղացու հաշուով, ծե-
ծում են, վիրաւորում նրա ընտանեկան պատիւը և այլն... մինչև որ
հարկերը լրացնում են, ապա հեռանում... Սա կոչւում է զինուորա-
կան էկզեկուցիա...

Նկարագրենք այժմ գլխաւոր դէպքը--երբ աշարը մնում է
որ և է կապալառուի վրայ։

Կապալառուն վարձում է իսկոյն իր քաթիւքը (գրագիրը) և
նշանակում (նորից վարձով) աշար հաւաքող հարկահաններ կամ
միւլթէգիմներ։ Միւլթէգիմը նշանակւում է մի կամ մի բանի գիւ-
ղերի համար։ Եթէ նրա շրջանը մեծ եղաւ, նա առնում է իրեն
օգնականներ, որ կոչւում են Շահնայ-ներ, մանր չափերով, ամեն
կալից ցորեն, գարի և այլ հարկեր հաւաքողներ։

Միւլթէզիմներն իրաւունք ունին պահանջելու կառավարութիւնից և՛ զարթիէներ, և՛ սուարիներ, և՛ ուրիշ փեսակի օգնականութեւր աշարը դանձելու համար:

Խաղաղ երկրագործի անսպասելի հիմքերը քայքայողը բեզելը-էսկէրիէն և աշարն են: Առաջինը քանդում է գիւղացու տունն իր ծանր ու մեծ չափովը, իսկ երկրորդն իր ծախելու սխալմովը, իր վաշխառական, ամեն փեսակ զեղծումների չարմար ձեռովը:

Միայն աշարի մէջ գործադրող զեղծումները թւելու համար հարկաւոր են ամբողջ երեսներ, տասնեակ էջեր... Հաշւենք միայն մի քանիսը, առանց որ և է սխալէմի:

Գիւղացին ծեծում է կալը, ցորենը թէժ անում, պարտաւորում: Նա իրաւունք չունի կամ ջւալները կամ ամբարը լցնել, մինչև միւլթէզիմը կամ նրա օգնականը չգաջ, չըլափի և հարկը չառնի — այսինքն չիբը թէ 1¹/₈-ը: Կալի փէրը իմացնում է միւլթէզիմին, որ վերջացրել է, թող գաջ չափի: Միւլթէզիմը չի գնում: Նա ոտի քրէ՛հ է ուզում... Կաշառք չուիր, կը գաջ, ցորենի կոցոր կը կնքի նահապետական մեծ փայտէ կնիքով և կը գնաջ, ցնոր կարգաբրու թիւն: Պարտահում է, որ գորեղ քամի է բարձրանում, կնիքը խախտում... Պարտահում է, որ գիւղական անկարգ շները գզւում և թէժի վրան են ընկնում, կնիքը խախտում... Կնիքը քանդւել է. ուրեմն՝ թէժից գողացել է փէրը: Դա գիտւում է իբր պետական գողութիւն» և յաճախ ամբողջ թէժը խլւում չի փառս և պարծանս անչափակ գրպանին կամ միւլթէզիմ աղայի կամ նրա չորպաճի կապալառուի: Գիւղացին ստիպւած է, ուրեմն, կաշառք տալ, որ միւլթէզիմը բարեհաճէ շուրով չափել և աշարը վերցնել. եթէ ոչ՝ գիշեր ցերեկ ստիպւած կը լինի, երբեմն ամբողջ ընտանիքով՝ ցորնի թէժերի վրայ հսկել:

Յաճախ միւլթէզիմները, երբ իրենց կրքերին (և՛ փողային, և՛ երբեմն տուփական) բաւարարութիւն չեն տալիս գիւղացիները, թշնամանում են և ձգտում թշնամու տունը քանդել, նրա օջախը մարել: Այգալիսի դէպքում նրանք նոյն իսկ վարձում են մի թուրք, մի բուրգ կամ մի աջլ սպոր վարձկան և ուղարկում, որ հակառակորդի թէժը քանդի: Հետեւեալ օրը գալիս, գրաւում են բոլորը, մի բան էլ վրայ առնում և նոյն իսկ փրոջն էլ բանտարկել տալիս:

Դիւղի ամենաազդեցիկ և ճիշտան՝ անձերն անդամ չկորին զաբ-
թէի, ողորմելի միւլթէգիմի կամ նրա շահնալի հետ խօսած ժա-
մանակ լմիւլթէգիմ աղա, աչաղլարնի էեօփէիմ ով են խօսում (ոպ-
ներդ համարում!!!): Ենթադրենք, որ այդպէս սորոանալով, կա-
շառքներ տալով համաձայնեցրեց միւլթէգիմին դալ, թէժը չափել:
Ոչժը, զափթիէի, զինւորի, սեփու թեան կալիտ ոչժը նրա կողմն է.
նրա կողմն է մեջլիսը, արդարութեան աչդ ծաղրանկարը. նրա կողմն
են զաղին ու գայմագամը, միւթասէրիֆն ու վալին, եպարքոսն ու
նախարարը. իսկ հարկաբու գիւղացուն ով է պաշտպանում... և
միւլթէգիմն անում է աչն ինչ իր քէֆն է փալիս. նագոզն էլ ինքն
է, սորոզն էլ: Լաւ իմացէք, որ դա միայն քրիստոնեայ ուսանների
հետ չի պատահում, այլ և մահմեդականների հետ: Բոլոր երկրա-
գործ և արհեստագործ ազգաբնակիւ թիւնը փքում է աշարի ծանր
քարի, աստիճանաւորների և վաշխառուների կեղեքումների տակ.
Թուրք, հայ, ասորի և նոյն իսկ քիւրդ... փքում են, ճգմում...
Պատմեմ միայն մի Փակտ մահմեդականների կեանքից, մնա-
ցածը հասկանալի կը լինի:

Տրապիզոնի շրջանում ապրում են օֆցի կոչող 60-70.000
հոգի մահմեդական յոյներ: Նրանք չափազանց մոլեռանդ մահմեդա-
կաններ են, ինչպէս ամեն մի նէօֆիտ (նորադարձ): Նրանք փալիս
են իիսպ մոլեռանդ ու հմուտ աստուածաբան մոլլաներ, որ չաճախ
Պոլսի սոֆթաների դպրոցի զարդն են կազմում: 1893 թ. ին նրանց
և միւլթէգիմների մէջ անբաւականութիւններ ծագեցին աշարի
առթիւ: Օֆցիք բողոքեցին հերթով՝ գայմագամին, միւթեսերիֆին,
վալին և ապա հեռագրով նաև մեծ եպարքոսին ու սուլթանին:
Նրանց բողոքներն ու խնդիրները լմինդ էր ալթը՝ եղաւ, առանց
որ և է հեթեանքի, նոյն իսկ առանց պապոստոսի մնաց: Մահմեդի
մոլեռանդ երկրպագու խորամանկ օֆցիները մի պարզամաւորութիւն
ուղարկեցին Բաթում, որ այնտեղից իսկոյն մի հեռագիր խփեց սուլ-
թանի անդուգական բարեկամ Վիլհելմ II կայսեր ¹⁾: Այսպէս դես-

¹⁾ Այդ հեռագիրը խփելու գաղափարը տեղի Ռիզալի մութասերիֆը,
որ մի բաւական լուսամտի տանձ էր և ուզում էր պաշտպանել ժողովրդին
ընդդէմ վաշխառու հարկահանների և կաշառակեր աստիճանաւորների.

պանի ձեռքով միջնորդութիւն արեց: Բարձրագոյն դասը, Կենսելով գործի վար ձև ստանալը, երկու քննիչներ ուղարկեց և 1894-ին գործն անուշի կապեց, մի կերպ քննցրեց, ձայնխեղդ Կարճեց:

Եթէ օջիցի աստածաբաններն այսքան արգելքների հանդիպեցին՝ մտածեցէք ուրեմն, թէ ինչ կը լինէր դառուր ոսյայի դրութիւնը:

Միւլթէզիմը չափում է ցորենը և $\frac{1}{8}$ (!)-ը առնում: $\frac{1}{8}$... դա միայն ծաղր է, անխիղճ, անօրէն ծաղր: Զափելու ժամանակ խեղճ գիւղացին ծալում ձեռքերը, վիզը ծոռում և ողորմելի հայեացքով նայում է, թէ ինչպէս կողոպտում են իրեն, ինչպէս խլում են իր և իր զաւակների բերնի վերջին պարտառ... Յաճախ գործ է ածւում, մանաւանդ վերջին ժամանակներս, Կասնորդական կշիռը, որ այդ կողմերի խեղճ գիւղացու համար բոլորովին անծանօթ է: Մի խաղ, երկու խաղ յետ ու առաջ է տարւում քարը և գողացւում 5-10-20 փութ, մի քանի հարիւր կիլօգրամմ... Յաճախ բերւում են աւելի ծանր քարեր... ուրքով ու ձեռքով վար զարնւում կշեռքի նժարը: Գիւղացին յաճախ Կասնում, հասկանում է... բայց ճանն ինչ: Կա ուժեղի իրաւունքն է: Հոովմի յաղթող քարբարոսը Կապիպոլիօնի վրայ իր սուրը գցեց կշեռքի մի նժարը, որ փրկանք տրուող ոսկին աւելի գուրս գալ: Ուժեղը միշտ արդար է ծանկաստանում: Միւլթէզիմը և կասալառուն այնպիսի ցանցերով են պատել վարչական մեքենան, որ եթէ որ և է խղճաբէր իշխանաւոր ուղենայ պաշտպանել ժողովրդին այդ վամպիրների ճանկերից, իսկոյն նրա ռոտի տակը սապոն են դնում, Կեղից զրկում:

Կան Կեղեր, ուր ցորենից ու գարուց վերցնում են հարկը **Մթերքով**—ցորեն և գարի, կան Կեղեր էլ, որ դրանցից անգամ

Երբ դատը քնեց, այդ լուսամտի պաշտօնեայի ոտի տակը սապոն դրին փողատէր վաշխառունները:

Վիլհելմ Կապեր խփած հեռագրի մօտաւոր բովանդակութիւնն այս էր. «Կապուր, դու մեր Սուլթանի մտերիմ բարեկամն ես. խնդրում, աղաչում ենք քեզ միջնորդել նրան, որ գէթ գործադրել որաւ այն օրէնքը, որ ինքն է դրել: Հարկահանները մեզ կողոպտում են հակառակ բոլոր օրէնքների: Իսկ եթէ մեզ չպիտի ազատես այս ծանր բեռից, կ'աղաչենք քեզ պատրաստել, որ գալթենք ասկէ, հեռանանք»:

հարկ ուղղում են նաղդ փողով: Իսկ այգու, խորի, առույրի և այլ աշարներ ամեն տեղ առնւում են հնչուն դրամով:

Մի միջակ բոստանից, կանաչեղէն, ձմերուկ, վարունգ, սեխ և այլն ցանկու համար, բացի արաղիայից (հողային հարկ), աշար առնւում է օրինակ 5 ոսկի (540 դահեկան):

8-ը սալ խորից աշարը լինում է 50 դահեկան: Իւրաքանչիւր 8 խորում առույրից—2 դահեկան: Նոյն ձեով և կորէկից, և՛ փեթակներից և այլն: Քակորը, կենդանիների աղբից պարարտութեամբ քակորն (աթար, КЭЗЯКЪ) անգամ ենթարկւում է աշարի. 100 հայրից կամ մի սալից առնւում են մօտ 10 դահեկան:

Մշու դաշտի մէջ ամենափոքր այգու աշարը 2-2½ ոսկի է (116-170 դահեկան), նոյնն է և ամենափոքր բոստանի համար: Այս աշարի համար մեծահոգի միւլթէզիմը նշանակում է վճարման ժամանակ 2-3 օր, առառաւելը մի շտաթ: Եթէ փողը չտրւեց, իսկոյն կը գայ, տան ցորենն ու դարին կը կռէ, կը տանի, օրինակ՝ քիլէն (մօտ 7 փութ 8 ֆունը) 50 դահեկան հաշուով այն ժամանակ, երբ դիւղում ծախւում է նոյն չափն 80 դահեկանով:

9) Իմթի հալ կամ ժառանգութեան հարկ: Ռայա-Քրիստոնեայի թողած ժառանգութիւնն իր ժառանգների վրայ հաստատու համար վերցւում է օրէնքով 10-15% բոլոր ստացւածքի արժէքի: Գնահատողը կառավարութեան պաշտօնեաններն են. մի կողմից կաշառք են ուրում ժառանգներից, միւս կողմից այնքան բարձր են գնահատում, որ իսկապէս իրենց ստացած բաժինը հասնում է իսկական գնի 30—40%—ին: Եթէ ժառանգները փող չունեցան պահանջած գումարը տալու, կալւածն ամբողջապէս կամ նրա մի մասը հրապարակային աճուրդով ծախում, առնելիքը լրացնում են և առաջ ժառանգութիւնը հաստատում: Իսկ եթէ ոչ մի հնար չունեցաւ ժառանգը վճարել կառավարութեան հասանելիք տուրքը՝ ամբողջ ժառանգութիւնը մնալալ են անում կամ չարքունիս գրաւում և ծախւում իրր պետական սեփականութիւն:

10) Պետական պատահական հարկեր: Այս խմբի մէջ մենք մտնում ենք այն բոլոր պատահական տուրքերը, որ կամ ժամանակաւորապէս, կամ միանգամ դրւում են ժողովրդի վրայ կառավարութեան կողմից: Այսպէս օրինակ 1867 թ. ին բոլոր քրիստոնեաների:

վրայ մի տուրք դրին իհանէ անունով (կալսերական նւէր), որով պէտք է հոգացէր Սուլթանի ճանապարհորդութեան ծախքը դէպի Անգլիա: Այդ հարկը դնելու ժամանակ խոստացան մի տարի միայն վերցնել և ապա ոչնչացնել, բայց տարին անցնելուց չեպոյ նորից շարունակեց մինչև որ մի նոր իհանէ լոյս ընկաւ ¹⁾: 1877-ի պարտերազմի ժամանակ բոլոր ազդարնակութեան երկու տարւայ հարկը միանգամից առնեց առաջուց, կռի նիւթական միջոցները զօրացնելու համար: Տրեկան բացարձակ խոստումներ յաշորդ երկու տարիներն ալ ևս հարկ չվերցնել, բայց պարտերազմից չեպոյ նորից վերցրին և աւելի զօրացած չափերով ու աւելի զազանալան միջոցներով:

Այս խմբի մէջն ենք մայցնում և կոռը, բեկեարը, անկարիան և այլ ձրի կատարել արող աշխատանքները. գիւղացիների մօտ և նրանց հաշուով ապրող զօրքը, զարթիէները, ասորիճանաւորները և այլն, որոնց փոխարէն յաճախ խոստացում է վճարել, իսկ չեպոյ չիչնցնողին բանտն են նետում, նրա ունեցածը ծծում կամ ամենաբարեկալող դէպքում՝ աշուն գեաւուր, ասում, ծեծում, վռնարում...

Տաճիկ պաշտօնեաների և առհասարակ տաճիկական բնաւորութեան հետ անծանօթ մարդու համար անըմբռնելի կը լինի կոռ ու բեկարի, եկող-գնացող զօրքերին և ասորիճանաւորներին կերակրելու ռաշական պարտականութեան բոլոր դժուարին ծանրութիւնը:

Մտնում են գիւղացու տունը 2.4.10-20 զինւած մարդիկ՝ նրանց անասուններին պէտք է կերակրէ պանդէրը. խոր, դար-

¹⁾ 1896-ին էլ Տաճկաստանը իհանէ ունեցաւ, Կառավարութիւնը կոչ արեց բոլոր իր հպատակ «հաւատացեալներին» կալսերական մի նւէր տալ զէնք գնելու համար (որ և գնեց ու բաժանեց մահմեդական ամբոխին): Հետաքրքիրն այն է, որ այդ իհանէն պարտադիր էր միայն մահմեդականների համար, իսկ քրիստոնեաների համար կամաւոր էր: Բայց իհանէի պաշտօնական հրովարտակում ասած էր այսպէս. «Կալսերական հաւատարիմ հպատակ քրիստոնեաների համար պարտադիր չէ. ով խորին հաւատարմութիւն ունի, նա իր գործով ցոյց կը տալ» (մօտաւորապէս այդ էր միտքը): Դէհ, թող քրիստոնեայ ռաշան համարձակւի իհանէ չտալ... 25 որ նա իսկողն կը մեղադրւի անհնազանդութեան մէջ, ալ ևս չի ճանաչւի իբր հաւատարիմ հպատակ, կասկածելի կը դառնալ: 96 թ. օգոստ. կամ սեպտեմբեր «Արեւիկ» լրագրում կար այդ պաշտօնական թուղթը:

ման, գարի—ամեն ինչ ձրի... Անկող հիւրերին էլ պէտք է կերակրէ։ Որքան պահանջկոտ են այդ հիւրերը... կիրակուրը մի քիչ վաղ եղաւ կամ քիչ, ծեծով ու մահաւան երկիւղով ստիպում են տան տիրոջը բերել իրենց ուզածը։ Այդ դեռ տանելի է։ Լաւ չղիանալուց չհոյ՛ նրանք պահանջում են և գոհացում իրենց անասնական կըրքերին։ Յաճախ ձիերը տալիս են տան տղամարդկանց, որ տանեն, մի քիչ ման ածեն, կամ առւակից ջուր խմցնեն, իսկ իրենք բռնաբարում են տան կանանց ու աղջիկներին։ Խնչ կարող է անել անզէն ու անպաշտպան գիւղացին։ Շատ էլ որ խօսի, գնդակը կամ գաշոյնը պարտաստ է նրա համար։ Երբ որ և է գիւղացու տուն այդ պապուհա-հիւրերը ոտ են դնում, դրացիք իսկոյն աշխատում են մի կերպ դադարի լսել տնից հարս ու աղջիկներին և թազցնել իրենց մօտ մինչև հիւրերի գնալը։ Տանը թողնում են սպառաւ կամ հասակաւոր կանանց։

Զինւած բռնաբարութեան այս զոհերին տեսնելով, շատ եւրոպացի ճանապարհորդներ եկել են այն եզրակաղութեան, որ Տաճկաստանի քրիստոնեաները բաւական անառակ են կամ գէթ անտարբեր լին դէպի ընտանեկան պատիւը։ Բայց վերջին ժամանակի աւելի խոր և աւելի ծիշոյ ուսումնասիրութիւններն արացուցին, որ միայն ղէնքի սպանիչ զօրութիւնը և իրենց անզէնութիւնն են նրանց ստիպում անտարբեր երեւալ։ (Տես „Положение Армянъ въ Турціи“ գիրքը, Մակ-Կոլմի յղւածը)։

(Շարունակելի)